ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2013-5-3-Ա

ք. Երևան 27.11.2013թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2013 թվականի նոյեմբերի 25-ի նիստում քննարկեց 2013 թվականի հոկտեմբերի 21-ին արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ Ջեներալ Մոթորս ԼԼՔ ընկերության (այսուհետ՝ բողոքարկող) «ACDelco» (հայտ No20111367) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» մասին կարգի 87-րդ կետի 2-րդ մասի «ա», 107-րդ կետի 2-րդ, 116-րդ կետի 2-րդ ենթակետի, 117-րդ կետի 1-9-րդ կետերի համաձայն հայտում նշված 01, 04, 07, 09, 12-րդ դասերի համար հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման ավելի վաղ նույնատիպ ապրանքների համար ՀՀ-ում գրանցման հիման վրա պահպանվող շփոթելու աստիճան նման «ACDelco»՝ (Ա/Ձ Ռազմիկ Հովհաննիսյան, ք.Երևան, Արարատյան 1-ին զանգված, 24շ., բն.11, 10251) ապրանքային նշանի առկայության պատճառով:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու մասին, քանի որ մերժված և հակադրված ապրանքային նշանները իսկապես շփոթելու աստիճան նման են:

Բողոքարկողի ներկայացուցիչը նշեց, որ ՀՀ վարչական դատարան հայցադիմում է ներկայացվել No10251 գրանցումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ և խնդրեց բողոքարկման խորհրդի նիստում այս հարցը քննարկել դատական գործի ավարտից հետո:

Համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ Ջեներալ Մոթորս ԼԼՔ ընկերության «ACDelco» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

Բողոքարկման խորհրդի նախագահ Գ. Մելքոնյան